

Հ ա ս տ ա տ ու մ ե մ՝



Handwritten signature

ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական
մասնագիտությունների գծով

պրոռեկտոր Է. Սարխյան

« 10 » 07 2020թ

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԻԳ. 00.02 – Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ,
միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ քաղաքական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար
Մարգարիտ Աշոտի Պետրոսյանի «Հարավային Կովկասի
հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների
ընդհանրություններն ու առանձնահատկությունները» ատենախոսության
մասին

Հաստատված է ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և
գործընթացների ամբիոնի 2020թ. հուլիսի 8-ի առցանց նիստում: Նիստին
մասնակցում էին քաղ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ. Քեռյանը, քաղ գիտ. դոկտոր,
պրոֆ. Ա. Մարգարովը, պատմ. գիտ. դոկտոր Ա. Մանուկյանը, քաղ. գիտ.
թեկնածու, դոց. Յ. Շափաղաթյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Ա.
Ղևոնդյանը, քաղ. գիտ. թեկնածու, դոց. Ն. Գալստյանը, պատմ. գիտ.
թեկնածու, դոց. Մ. Սողոմոնյանը, քաղ. գիտ. թեկն Յ. Ակոպյանը, պատմ.
գիտ. թեկնածու Լ. Հովսեփյանը

Մարգարիտ Պետրոսյանի ատենախոսության թեման արդիական է և
հրատապ, որովհետև Հարավային Կովկասի հակամարտությունները և դրանց
կարգավորման գործընթացները շարունակում են համարվել
տարածաշրջանային անվտանգության վրա ազդեցություն ունեցող առանցքային
գործոններ: Ատենախոսության հետազոտության օբյեկտը հարավկովկասյան
հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների
ընդհանրություններն ու առանձնահատկություններն են: Ներկայումս,

Հանրապետության քաղաքական գիտությունների մեջ առկա չէ այս հակամարտությունների համեմատական վերլուծությունը, կարգավորման ռազմավարության մոդելավորումը, որը հնարավորություն կտա բարձր հավաստիությամբ գնահատել հակամարտությունների կարգավորման գործընթացները, տարբեր ընթացքների պատճառներն ու խոչընդոտող գործոնները, կարգավորման գործընթացների զարգացման ընդհանուր միտումները, արդյունավետության բարձրացման հնարավորությունները և այլն: Նման հետազոտությունը հիմք կհանդիսանա գիտականորեն հիմնավորված պրակտիկ քաղաքականության ձևավորման համար: Սրանով է պայմանավորված պրակտիկ և տեսական արդյունքների ստացման նպատակով, հիմնարար գիտական ուսումնասիրությունների առանձնահատուկ կարևորությունը մեզ համար ԼՂՀ հակամարտությունում ճիշտ քաղաքականություն մշակելու առումով:

Մ. Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, դրա հիմնական նպատակներն ու խնդիրները, աղբյուրների բնութագրերը, թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը և գիտական նորարարությունն ու գործնական նշանակությունը: Ներկայացված են նաև ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերը, ժամանակագրական սահմանները, ցուցադրված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք և ներկայացված են պաշտպանության:

Հեղինակը ներկայացրել է կոնֆլիկտոլոգիայի ժամանակակից տեսության հիմունքներն ու բաղադրիչները՝ անվտանգային հետազոտությունների և միջազգային հարաբերությունների տեսության ընդհանուր կառուցվածքում: Ուսումնասիրված է հարավկովկասյան հակամարտություններում ռազմաքաղաքական ներկա վիճակն ու հեռանկարները՝ հիմնվելով հակամարտության գոտում քաղաքական և ռազմական իրավիճակի վերլուծության, ինչպես նաև համանման էթնո - քաղաքական և միջպետական հակամարտությունների համաշխարհային

գործնական առկա փորձի ու տեսական հիմքերի վրա: Հեղինակին հաջողվել է ավարտին հասցնել իր հետազոտական նպատակները: Հակամարտությունների ուսումնասիրման ժամանակ մոդելավորման խնդիրները, կիրառվող հիմնական մեթոդները, դրանց կիրառման առանձնահատկությունները ենթարկվել են համեմատական վերլուծության: Մշակվել է հակամարտությունների համեմատական վերլուծության ռազմավարություն, ինչպես նաև հակամարտությունների համեմատական վերլուծության նոր մոդել: Լեոնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների հատկանիշներն առանձնացվել են, որպեսզի բացահայտվի դրանց կարգավորման գործընթացների առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Պարզվել է նաև Հարավային Կովկասի չճանաչված պետությունների ինտեգրման հնարավորություններն ու ազդեցությունը միջազգային ճանաչման գործընթացի վրա: Հեղինակի կողմից իրականացված հակամարտությունների համեմատական վերլուծությունը երեք հաջորդական քայլերով՝ հակամարտությունների բնույթի որոշումը և ընտրված փոփոխականների հիման վրա իրականացվող վերլուծությունը, հիրավի կարելի է դիտարկել որպես նորույթ: Մշակվել և գիտականորեն հիմնավորվել է հակամարտությունների համեմատական վերլուծության ժամանակ կիրառվող հանրաքվեի անցկացման պայմանները, միջազգային դատական ատյաններին դիմելու հնարավորությունները և այլն: Արժևորում ենք Լեոնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հակամարտությունների ընդհանրություններն ու առանձնահատկությունները համեմատական վերլուծության մոդելի հիման վրա ներկայացնելը, որով բացահայտված են կարգավորման գործընթացի վրա ազդող հիմնական խոչընդոտները, միջազգային իրավունքի սկզբունքների կիրառման դժվարությունները, միջնորդական ձևաչափերի և, առհասարակ, միջնորդական գործունեության արդյունավետությունը: Հիմնավորված է, որ ժողովրդավարական պետության ստեղծումը և բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման

գործընթացը կարող է նպաստել հետպատերազմական փուլի մարտահրավերների հաղթահարմանը որպես լրացուցիչ խթան:

Ատենախոսությանն ունի հստակ գիտատեսական և կիրառական նշանակություն: Այն հարստացնում է քաղաքագիտության խնդրային ու առարկայական դաշտը, նպաստելով հակամարտությունների համեմատական վերլուծությանն ու հավաստի կանխատեսումների իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել հակամարտությունների կարգավորման գործընթացներում և կոնֆլիկտոլոգիայի դասավանդման մեջ, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտությունում զսպման քաղաքականության գործնական իրականացման և տարածաշրջանային անվտանգությանն ու կայունությանը Հարավային Կովկասում քաղաքագիտական գնահատական տալու համար:

Ատենախոսության գիտական նորույթը հստակորեն ձևակերպված է: Աշխատանքը հակամարտությունների համեմատական վերլուծության համակարգված գիտական հետազոտության կիրառման առաջին փորձն է, երբ քաղաքագիտական արդիական տեսության շրջանակներում, հանգամանավիքն արկվում և նախագծվում է Ղարաբաղյան հակամարտության իրավիճակի և Հարավային Կովկասում տարածաշրջանային անվտանգության համատեքստում տարբեր տեսական մոտեցումներ: Ատենախոսության մեջ առաջ բերված և հիմնավորված դրույթները գիտական են: Տարածաշրջանային էթնոքաղաքական հակամարտությունների համեմատական վերլուծության հիման վրա կարելի է հետևություն անել Ղարաբաղյան հակամարտությունում զսպման արդյունավետ քաղաքականության իրականացման հնարավորության մասին:

Ատենախոսությունն ունի նաև որոշակի գիտագործնական նշանակություն: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել անվտանգության, արտաքին և ռազմական ոլորտների քաղաքականության մշակման և իրականացման համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

համապատասխան ինստիտուտների գործնական աշխատանքի համար: Հետազոտական աշխատանքի արդյունքները, տեսական և գործնական ընդհանրացումներն ու նորովի մեկնություններն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել գիտական և ուսումնական գործընթացներում, ռազմավարական ոլորտի կադրերի նախապատրաստման համար, համապատասխան ուսումնական կուրսերում, դասագրքերում, ինչպես նաև հետաքրքրություն ներկայացնել լայն հանրության, ուսանողների, քաղաքական-պետական գործիչների համար:

Ատենախոսը տիրապետում և պահանջվող մակարդակով կիրառում է համեմատական վերլուծության մեթոդը: Նրա կողմից կիրառվող համակարգային մեթոդները թույլ են տալիս հասկանալ պատճառահետևանքային գործընթացները նաև դարաբաղյան հակամարտության շրջանակներում: Այն իր մեջ ներառում է նաև անվտանգային և ռազմավարական հետազոտությունների առանձին տարրեր: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները.

Ատենախոսությունը գերծ չէ նաև որոշակի թերություններից, որոնցից հարկ ենք համարում նշել հետևյալը.

1. Հեղինակը փորձել է գնահատել Լեռնային Ղարաբաղում, Հարավային Օսիայում և Աբխազիայում հետկոնֆլիկտային փուլում ժողովրդավարության խթանման արդյունավետությունը հակամարտությունների կարգավորման գործընթացների համատեքստում և վերհանել Հարավային Կովկասի չճանաչված պետությունների բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման օրինաչափություններն ու այդ գործընթացի վրա ազդող հիմնական գործոնները: Սակայն այս մոտեցումը որոշակի հարցականներ է առաջ բերում: Նախ Հարավային Օսիան և Աբխազիան ի տարբերություն Արցախի մասնակի ճանաչված պետություններ են: Նրանք գտնվում են ՌԴ քաղաքական ազդեցության ոլորտում և այստեղ ազատ ներքաղաքական

գործընթացներ չեն գնում, իսկ Արցախը մեծամասամբ ՀՀ ներքաղաքական գործընթացների ազդեցության տիրույթում է: Մեր կարծիքով ժողովրդավարացման գործընթացի անմիջական կապը հակամարտությունների լուծման հետ նույնպես վիճարկելի է, ելնելով Կոստվոյի հարցում դեմոկրատիայի բաստիոն Արևմուտքի վարած երկակի ստանդարտների քաղաքականությունից: Այս առումով հիշյալ մոտեցումը դեռևս հիմնավորման կարիք ունի:

2. Հեղինակը գրում է, որ „վերջին տասնամյակների ընթացքում միջազգային իրավունքը լիարժեք հիմքեր է ստեղծել հակամարտությունների կարգավորման համար և լիազորված միջազգային կազմակերպություններն ավելի հաճախ են հանդես գալիս միջնորդական առաքելությամբ, սակայն չկարգավորված հակամարտությունների թիվը շարունակում է աճել„-էջ 30: Այստեղ կա մտքի հակասականություն: Եթե հակամարտությունները շարունակում են աճել, ուրեմն միջազգային իրավունքը չի կարողացել լիարժեք հիմքեր ստեղծել հակամարտությունների կարգավորման համար: Միջազգային իրավունքում և Հելսինկյան եզրափակիչ ակտում ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության դրույթներում առկա հակասականությունը և երկակի մեկնաբանությունները դրա վկայությունն են:
3. Երկրորդ գլխում առկա է երեք ենթավերնագիր, որտեղ հեղինակը տալիս է հարավկովկասյան երեք հակամարտությունների համառոտ պատմական ակնարկը՝ էջ 57-92: Այս ենթավերնագրերում առկա նյութը իրենից ներկայացնում է մակերեսային ոչ գիտական նկարագրություն: Մեր կարծիքով այս նյութը պետք է տարվեր տողատակ, որպես ծանոթություն, այն պետք կլիներ բուն տեքստի վերլուծական հատվածի համար որպես փաստերի ներկայացում:

Սակայն վերը նշված թերությունները չեն զցում ատենախոսության

գիտական արժեքը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ԵՊՀ Քաղաքական
ինստիտուտների և գործընթացների ամբիոնը որպես առաջատար
կազմակերպություն գտնում է, որ Մարգարիտ Պետրոսյանի «Հարավային
Կովկասի հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների
ընդհանրություններն ու առանձնահատկությունները» թեմայով
ատենախոսությունը լիովին համապատասխանում է գիտական աստիճան
հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ
հեղինակը լիովին արժանի է ԻԳ.00.02-Քաղաքական ինստիտուտներ և
գործընթացներ, միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆ. *Գրեգորյան* / Գ. Քեոյան/

քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆ. Գ. Քեոյանի
ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար,
պատմ. գիտ. թեկն.



Գրեգորյան
Լ. Հովսեփյան